

ՊԵՐՃ ՍԵՂՐԱԿՅԱՆ. ԶԲԸՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԼԳՈՆՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԲՈԼՈՐ ՀԻՄՔԵՐՆ ՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆ, 8 ԱՊՐԻԼԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Կիպրոսի Մելգոնյան վարժարանի փակման որոշմանը վերաբերող հարցեր քննարկվեցին ապրիլի 8-ին Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Կենտրոնական վարչության նախագահ Պերճ Սեղրակյանի հետ լրագրողների հանդիպմանը: Հիշեցնենք, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության ղեկավար մարմնի՝ Կենտրոնական վարչության որոշմամբ 2005 թ. հունիսից Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունը դադարեցնելու է իր գործունեությունը, ինչը վրդովմունք է առաջացրել ինչպես վարժարանի ներկայիս աշակերտության, այնպես էլ նախկին սաների շրջանում: Նրանց ջանքերով ստեղծվել է ինտերնետային էջ, ուր բազմաթիվ մեղադրանքներ են ներկայացվում ՀԲԸՄ-ին: Ինչպես նշեց ՀԲԸՄ Կենտրոնական վարչության նախագահ Պերճ Սեղրակյանը, 1925 թ. հիմնադրված վարժարանը կատարել է իր առջեւ դրված խնդիրները եւ այսօր արդեն չի համապատասխանում արդի պահանջներին: Ըստ ՀԲԸՄ-ի կատարած ուսումնասիրության, Միջին Արեւելքի մի շարք բարեգործական դպրոցներում արձանագրվել է աշակերտության թվաքանակի նվազում եւ ավելորդ ծախսերի աճ: Այս երեւույթն ունի բազմաթիվ պատճառներ. նոր սերնդի միաձուլումը տվյալ երկրների հանրությանը, օտարերկրյա ուսումնական հաստատությունների հրապույրը, ինչպես նաեւ շատ ընտանիքների՝ երեխաներին օտար դպրոցներ տանելը: Բացի այդ, Միջին Արեւելքից մեծ թվով հայ ընտանիքներ տեղափոխվել են այլ մայրցամաքներ, ինչի հետեւանքով այդ տարածքում նվազել է հայերի թիվը: Պերճ Սեղրակյանի խոսքերով, ՀԲԸՄ Կենտրոնական վարչությունը դժվարությամբ է գնացել այդ քայլին, սակայն ժամանակի թելադրանքը այլ պահանջներ է առաջադրում: Փակելով վարժարանը՝ իրենք մտադրություն ունեն Հայաստանում եւ Արցախում հիմնել մշակութային կենտրոններ, իսկ Կիպրոսի համալսարանում բացել եթնիկական ուսումնասիրությունների կենտրոն: Հանդիպմանը լրագրողներից շատերն անդրադարձան Մելգոնյան եղբայրների կտակին, ըստ որի, ՀԲԸՄ-ն իրավունք չուներ այդպիսի որոշում կայացնելու, քանի որ վարժարանն ի սկզբանե հիմնադրվել էր կարիքավոր հայ մանուկներին անվճար կրթություն տալու համար, թեպետ ներկայումս բոլոր աշակերտները վճարում են ուսման համար (ծնողները կամ որեւէ բարեգործական ֆոնդ): Բացի այդ, ըստ կտակի, եթե միությունը համարվի սնանկ կամ լինեն այլ պատճառներ, ապա վարժարանը պետք է անցնի Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տնօրինության տակ: Այս դեպքում, փաստորեն, հերքվում է ՀԲԸ Միության նախագահի բերած այն փաստարկը, որ աննպատակ գումարներ են ծախսվում: Այս ամենից գատ, որոշմանը դեմ է եղել նաեւ Կիպրոսի կառավարությունը՝ փաստարկելով, որ վարժարանը, նախ, դիտվում է որպես պատմամշակութային արժեք, ապա՝ ազգային փոքրամասնությանը պատկանող կրթահամալիր է եւ պետք է շարունակի գործել, եւ միաժամանակ առաջարկելով լրացուցիչ ֆինանսավորում: Պերճ Սեղրակյանի խոսքերով, իրենք այդ որոշումը կայացնելու բոլոր հիմքերն ունեն եւ կտակում նման կետ չկա, եւ վարչության կայացրած որոշումն այլեւս չի փոխվի: Մելգոնյան կրթական հաստատությունը, որ պետք է ծառայեր իբրեւ որբանոց Նիկոսիայում (Կիպրոս), հիմնել են Կարապետ եւ Գրիգոր Մելգոնյան եղբայրները 1926 թ.: Ստեղծման օրից վարժարանը գտնվում է ՀԲԸ Միության հովանու ներքո: Մելգոնյան եղբայրները կտակով 5 մլն դոլար են թողել վարժարանին, որը, ըստ աշակերտների, այսօր դարձել է մոտ 5,5 մլն դոլար: Իսկ 78 տարիների ընթացքում, ըստ մելգոնյանցիների, ՀԲԸՄ-ն երբեւէ հաշվետվություն չի ներկայացրել, թե ինչպես են ծախսվել այդ գումարները: